

**Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԿԱՆՅԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԼ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ  
ՎԱՐԴԱՌԱՑ ՏՈՆԻՆ**

(19 փետրվարի 2004 թ.)

«Երանի՛ է ձեզ, և որ ձեզ նախադեն ու  
հալածեն և իմ պատմառով ձեր մասին  
ամեն դեսակ չար խոսք՝ սուր ասեն»:

(Մատթ. Ե 11)

«Յանուն Նօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ.

Տիրոջ ավելիարանական այս պատգամն օրինություն դարձավ քոյոր այն քրիստոնյաների համար, ովքեր քրիստոնեությունը դարձեցին իրենց անոնք, իրենց մաշկի գոյնը և պատրաստ նղան նահագակության և իրենց արյան միջոցով պահպաննեցին քրիստոնեական հավաքքը, որովհետև այդ ամենը գաղափար էր, միաձողություն, գիրակցություն, և ոչ չի կարող հանուն Քրիստոսի նահագակության պատրաստ քրիստոնյայի միջից հանել այդ ամենը:

Եվ ահա այսօր, մանավանդ Սրբոց Վարդանանց այս նվիրական գոնի օրը, երբ մենք ողջ Եկեղեցով նշում ներ հիշագակը Ավարայրի ճակապամարդում հոգևոր և բարոյական հաղթանակ փարած Սուրբ Վարդան Մամիկոնյանի և նրա հետք նահագակված հազար երեսունվեց զինվորների, այս օրը դառնում է մեզ համար ավելի նվիրական, ավելի սուրբ, այսօր մենք կարծեք թե ավելի քրիստոնյա ներ դառնում, որովհետև Վարդանանց ոգին, Վարդանանց շունչն է այսօր մեզ ներշնչում, որովհետև այսօր հավաքված ներ այս Սուրբ Տաճարի մեջ Սրբոց Վարդանանց նահագակ սուրբ հոգիների հրավերով:

Այս, Տղմուր գերի ափին հասած հայոց բանակն իր ունեցած փոքրաթիվ ուժերով կանգնել էր Հազկերպի մեծաթիվ զորքի դեմ: Շատերս զիրենք, անշուշփ, Սրբոց Վարդանանց պատմությունը, և այսօր պատմությունն ապրելու և այդ պատմության խորհուրդը զիրակցնելու օրն է: Մենք կարող ենք գիտնեն, թե ինչպիսին է այսօր Սուրբ Վարդանը մեր մեջ: Արդյոք այսօր մենք Սուրբ Վարդանի հոգին մեր մեջ կրողներն ենք, այսօր մենք այս հազար երեսուն և վեց նահագակների ոգին մեր մեջ կրողներն ենք, մենք է՛լ ենք այսօր պատրաստ մեր ժամանակների մարդահրավերներն ընդունելու:

Գուցե այսօր մեզ չեն հալածում մեր հավաքքի համար, գուցե այսօր շատ չեն խանգարում մեզ, որ մենք ազատորեն պաշտենք մեր քրիստոնեական հավաքքը, սակայն այսօր էլ մենք կանգնած ենք աշխարհի բազմաթիվ մարդահրավերների առաջ: Եթե այն օրերին կրոնական հալածանքն էր Հազկերպի կողմից, ապա այսօր մենք դեսնում ենք քարքեր հարձակումներ մեր Եկեղեցու վրա՝ լինեն դրանք աղանդավորներ, լինեն դարքեր գործողու-

թյուններ, որոնք որ ուղղված են այսօրվա մարդու դեմ, որոնք խանգարում են նրա քրիստոնեական ապրումներն ու զգացումներն ավելի կենդանի դարձնելու: Ահա մի կարևոր հարցում, որ յուրաքանչյուր մարդ այսօր իրեն պիտի լրա. որքանո՞վ է ապրում իր ներսում Վարդանանց այդ հերոսամարդու:

Մենք գալիս ենք Վիրահայոց թեմից և այնպեսից գիրենք, որ այդ պատերազմին մասնակցություն է ունեցել նաև վրաց նշանավոր գորականներից Վախթանգ Գորգասալը, և Կովկասի մեր քրիստոնյա եղբայրները ևս մեզ հետ միասին էին: Նոյն կերպ այսօր էլ շաբաթական մարդակերներ կան, որոնք ոչ միայն մեզ են սպառնում, այլ նաև ողջ մարդկությանը և ողջ քրիստոնյա ժողովրդին:

Մի պահ, սիրելիներ, այսօր կանգ առնենք ու նայենք պատմական այդ օրերին. Քաղկեդոնում հավաքված գարբեր քրիստոնեական Եկեղեցիների՝ ներկայացուցիչներ փորձում էին այդ օրերին գարբեր խնդիրներ լուծել, սակայն մեր ժողովուրդն այդ օրերին կենաց-մահու և ճշմարիք քրիստոնեական հավագի համար պատրաստ էր նահարակության: Մենք այդ օրերին կարիքը չունեինք ճշգրելու ասրբածարանական գարբեր խնդիրներ, դրանք մեզ համար այլևս ճշգրիք էին, սակայն մենք կարիքն ունեինք մեր հայրերի ասրբածարանական օրինությունը, զաղաքարներն ու մրածողությունն այլևս կյանքի կոչենու: Եվ ահա Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցներն իրենց կյանքով ցույց տվեցին, որ ճշմարիք քրիստոնյաներ են:

Ահա թե ինչու հայերի կյանքը եղել է, սիրելիներ, ոչ թե քրիստոնեության մասին խոսելը, վարդապետելը, այլ այդ ամենի հետ նաև սեփական կյանքով ապացուցել քրիստոնեական հավագի գորությունն ու ուժը:

Այսօր, սիրելի հավաբացյալ հայորդիներ, Ս. Վարդանանց գոնք հաջորդեց երկու օր առաջ Ղևոնյանց նահարակաց մեծ գոտին, երբ մենք նորից անդրադառնք մեր հոգևոր դասի նահարակությանը Վարդանանց պատերազմում, երբ Ղևոնյան՝ Ռովսեփ Կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, գարան Խուժիսպանի խորքերը և այնպես նահարակեցին՝ ջարդելով, փշրելով նրանց ոսկորները: Սակայն մի վայրէյան իսկ մեր Եկեղեցու հայրերը, մեր քահանա հայրերը երբեք չընկրկեցին ու մնացին անհողողություն:

Ահա այդ շունչն է, որ այսօր մեր նվիրական այս երկու երիտասարդներին հրավիրել է սարկավագությունից դեպի քահանայություն:

Առաջին՝ S. Կոբրիճ քահանան, որ ավագանի անունով Արմեն է,՝ ծնվել, մեծացել և կրթվել է Միացյալ Նահանգներում: Վաչե արքեպոս. Ռովսեփյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ, ապրել Եկեղեցական կյանքով: Եվ ահա արդեն մի քանի գարի է, ինչ հրավերով Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ընդամենք հանդիր փեղափոխվել է այսքեն՝ ապրելու և իր կյանքը շաղախելու մեր Եկեղեցական կյանքին: Այսօր S. Կոբրիճ քահանան քահանական օծում սպացավ՝ ապրելու Ղևոնյանց կյանքով, ապրելու մեր նահարակ հայրերի կյանքով:

Եվ նրա կողքին մյուս, այս գեղեցկարես քահանան՝ S. Շահան քահանան (ավագանի անունով՝ Վարդան), ծնվել և կրթություն է սրբացել այսպես՝ ուսանելով U. Էջմիածնի Գուրգյան Ռոգևոր Ծեմարանում: Այսուեելով որպես վերակացու իր ծառայությունն է բնրել ինչ այդ նոյն նվիրական հարկի ներքո և ապա աշխատել Երջանկահիշարքակ Գարեգին

Ա Կաթողիկոսի անունը կրող ասդրվածարանական, հայագիտական կենտրոնում: Եվ այժմ նա և ի իր օճակից եղբոր ենք միասին կոչվում է քահանայության արձակելու և կապելու մեր մեջքերը, փառու մեր հավաքացյալներին Հաղորդություն և շարունակելու առաքելական մեր քահանայագործությունը:

Ձույլ գրքեր, Վեհափառ Տեր, Զերդ Սրբության անունից շնորհավորելու մեր այս հրաշալի երիտասարդներին, ինչու չէ: Նաև հանուն մեր հոգևոր դասի շնորհավորելու Զերդ Սրբության այս նվիրական և սուրբ օրվա առիթով, որովհետք զիրքենք, որ Դուք մեր Տեր Հնուս Քրիստոսի հեվանդությամբ, միշտ նայելով մեր ժողովրդին, մտածում եք. «Ահա հունձքն առապ է, բայց մշակները՝ սակավ» (Մատթ. Ձ 37): Եվ ահա այդ հոգևոր դաշտուն այսօր մեր երկու քահանաների օծմամբ ավելանում է:

Մենք շնորհավորում ենք նաև մեր նորաօծ քահանաների ծնողներին և բոլոր հարազարդներին, որոնք որ այսպես են և մեծ ուրախություն են ապրում:

Սիրելիներ, Վարդանանց գոռնին, Ս. Պատարագի ավարտին, մենք նաև կապարում ենք Հայրապետական մատթանը, որովհետք այս գոռնը մեկ ուրիշ ուրախություն է պարզեւում մեզ. այսօր անվանակոչության օրն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի, որովհետք Եղիշեի պատմությունից զիրքենք, թե ինչպես առաջադիմն Գարեգինը, որ դարձավ հայոց ազնվականներից առաջին նահարակն այդ պարերազմի, ինչպես իր թափված արյամբ պահպանեց մեր քրիստոնեական հավաքքը: Մենք զիրքենք այսօր, որ առաջադիմ Ս. Գարեգինի, Վարդան Մամիկոնյանի և մեր հազար երեսունվեց սուրբերի աղոթքներն առափապես իշխում են դեպի մեր Հայրապետք՝ Նորին Սրբությանը արևշափ քաղում փարիներ պարզեւելու, որպեսզի հովվի մեզ, որպեսզի հոգևոր դասին և նրանց հետքող ժողովորդին առաջնորդի դեպի խաղաղության նավահանգիստ:

Այսօր, սիրելիներ, որքան մենք կարիքն ունենք հոգևոր խոսքի, Ավելարանի խոսքի, անկենդ միերմության ու անկեղծ բարեկամության: Այս ամենը դրված է Եկեղեցու ուսերին: Պարկերացրեք, թե որքան բարդ ու դժվար է մեր Եկեղեցին առաջնորդող հովքապետի՝ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Երկրորդի կրած ծանրությունը: Մենաք աղոթք մեր Վեհափառի համար, որպեսզի Հայոց Եկեղեցին ուղիղ Վարդապետությամբ առաջնորդի, և մենք, որպես նվիրյալ զինվորներ, նման այն հազար երեսուն և վեց նվիրյալներին, Հայոց Հայրապետի կողքին շարունակենք մեր հոգևոր ծառայությունը:

Ու թող Ասդրված օրինի մեր ժողովրդին այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն: